ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 15

«18» 02 2020թ.Ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Դմիտրիի Չիչոյանին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի պաշտոնից ազատելու և Գագիկ Սամվելի Մարգարյանին նույն պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար՝ 17.02.2020թ. N 38-Ա և 41-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ա.Չիչոյանի կողմից՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Գ.Մարգարյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Ասլանյան Հայկ -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Խալաթյան Հարություն -	Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ
Մարտիրոսյան Հայկ -	Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Աբաջյան Արուսյակ -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ
Խալաթյան Նաիրա -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Բաղդասարյան Լևոն -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Ղարաքեշիշյան Հայկ -	Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի մարտի 9-ը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ՝ **Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**